

• տ հ ի շ ւ 9 4 6 1 • տ հ ի շ ւ 8 4 6 1 7 ո գ ո կ ը  
ո վ ր ա լ ի ս է Բ ո ւ թ զ ն դ ի զ Յ ո վ ո ւ զ պ ո ւ ո վ ե ր կ  
Ա վ ա ն կ զ ն զ Տ պ ո ւ յ ո ւ մ ա ն կ ա յ ո ւ

2/ Կը խօսիւամէն մէկուն մէջ, եւ ես կը մաղթեմ, որ Տէքը պարգեւէ իրենց բարութիւն եւ արդիւնաւորէ իրենց ջանքերն ու բաղանքները։ Վը նամ վկայել, որ իմօրեայ սրահին խնդրոյն ծագումն ու ընթացքը կը պարտինք, առաւելապէս, Եկեղեցասէը Տէկնանց Միութեան։

3.-ԴՊՐԱՅ ԴԱՍ-Խանդադատանք կը զգամ ամէն անգամ, երբ առիթը կունենամ մեր Սուեկեղեցւոյն Դպրաց Դասին մասին խօսելու գիրերէ միասեռ մարմին մըն է ան, կազմուած աղջկներէ։ Տղաները այնչափ քիչ են խումբին մէջ, եւ այնչափ քիչ կերեւցնեն իրենց դէմքերը չենդշաբեթի օրերու փոքաներուն եւ կիրակնօրեայ ալ երգեցողութեանց մէջ, որ գուցէ չարդարացնէք, եթէ ես մեր Դպրաց Դասը երկսեռ անուանեմ։ Արդար է ըսել, որ մեր Դպրաց Դասը շը ջանակիս նման Միութիւններէն առաջիններէն է։ Հաւատարիմ եկողներ են փոքաներուն, եւ կիրակնօրեայ իրենց գեղգեղը խիստ գովական ։ Մեր դպրապետ Պախոսը ով չամամճեան ամերիկայի մէջ գտնուած միմիայն քանի մը հատ կարողներէն մէկն է, որ գիտէ երգել, գիտէ սովորեցնել, եւ գիտէ երգել տալ։ Իր կողմէ սարքուած անցեալ եւ այս տարիներուն երգահանդէսները, ու ամէնուն ալ կողմէ անոնց տրուած անկեղծ գովասանքները անայլայլ վկայութիւններն են թէ Դպրապետ Պախոսը ով չամամճեանի եւ թէ Դպրաց Դասին պատկանողներուն արժէքներուն։ Հայ տղաներուն Դպրաց Դասէն բացակայութիւնը մենք կը դիտենք խոր ցաւով։ Մեր Դպրաց Դասը իր Դպրապետով միասին, ամէն քաջալերանքի ու գնահատութեան արժանի են։

4.-ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ-ԻՐԵՆՑ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ չեմ կանչուիր թէեւ, բայց կը լսեմ, որ վիճակները բաւական լաւ է եղեր։

5.-ԿԱՐԳԵՐ-Տարուանս ընթացքին ունեցած ենք 37 մկրտութիւն + 19 պսակ եւ 27 թաղում։

6.-ԱՐԱՋՆ-ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ-Տարիներ առաջ կար այդ անունով քանի մը տիկիններէ կազմուած մարմին մը, բայց հիմա չկայ չեւ որպէս զի Ազգ-Արաջնորդարանը մեզմէ ալ նիւթական օժանդակութիւն ունենայ, նպատակ ունիմ մօտերս վերակազմել այդպիսէ մարմին մը։

7.-ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑ-Ամիսէ ն աւելէ է, որբացուած է կիրակնօրեայ Դպրոցը, որուն դասաւանդութիւնը սիրայօժար կերպով ստանձնեց Օբորոգի նալպանտեան քանից նկեղեցին բեմէն ծանուցինք այս պարագան, դժբաղդաբար մինչեւ հիմա շատ քիչ մանուկներ զրկուած են։ Յատկապէս կը խնդրենք, որ ներկաները, եւ ուր ու ներկաները կը նան իրենց ձայնը հասցնել ըսեն անոնց, որ փոքրերը ամէն կիրակի, ժամը 10 ին եկեղեցի դրկուին, կիր-Դպրոցին համար։

8.-ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ-ԵՐԵ Լսած եմ, ուղակի թէ անուղղակի միջոցներով, ուեւէ հիւանդի մասին, տունը թէ հիւանդանոց, իսկոյն այցելած եմ անոր ։ Երբ մէկը իմ ծառայութեանս պէտք ունեցած է օգնած եմ իրեն, կարողութեանս չափով։ Զարմանալի է, սակայն, ժողովրդեան հոգեբանութիւնը, հիւանդին տէրը լուր չի տար ինչի թէ հիւանդ ունի, եւ կը սպասէ, որ ուրիշ մը ընէ զայդ-դժբաղդաբար զայդ ընող ուրիշն ալ յաճախ չգտնուիր։

3/ Ոչ հեւանդանալը ամօթ է, եւ ոչ ալ հեւանդի տէը ըլլալը, եւ ուրեմն յատկապէս կը խնդրեմ, ինչպէս Եկեղեցին բեմէն ալ յաճախ խնդրած եմ, որ հեւանդին տէը ինչպէս որ բժիշկին լուր կուտայ, թող ինժի ալ թէլէփօնով գիտցնէ իր հեւանդին մասին, որպէս զի այցելեմ։  
9.-ՌԻՐԻՇ ԱՐԻՔԵՐԻ-ԱՆԹԵՎԱԼ տարի երկու ընտանիք, տարբեր ժամանակներ, ինժի լուր տուին իրենց ընտանեկան խռովութեանց մասին; եւ իմ միջամտութիւնս պարապը չգնաց, երկու տունն ալ փրկուեցան գէշ տագնապներէ: Կաղօթեմ Աստուծոյ, որ ոեւէ ընտանիք ներքին տագնապներ չունենայ, դժբաղդութեան մը պարագային թող փութան կանչել զիս  
10.-ՀՆՏԱՆԻՔՆԵՐՈՒԻ ՍՅՑԵԼԵԼ-Պաշտօնավարութեանս սկիզբէն մինչեւ օրս ոչ մէկը կանչեց զիս, որ իրենց երթամ, իրիկուն, ժամը 8 էն վերջ, եր ընտանիքին անդամներուն հետ կրօնական խօսակցութիւն ընելու: Իմ նախորդ թեմերուն մէջ շատ տուներ այցելեցի, այս մտքով միայն, դժբաղդաբար, ամէն տեղ ալ խօսակցութիւնը անմիջապէս փոխեցին կամ կուսակցականի եւ կամ քաղաքականի, որոնց մէջ մեր ժողովուրդը բաւական հմտութիւն եւ պատրաստութիւն ունի, ու ես վրիպած նոլատակով դուրս եկած եմ տուներէն, եւ այդ փորձառութեանս պատճառաւ է, որ չեմ փորձած նոյնը ընել: Հոս: Մեծ ուրախութիւնով պատրաստ եմ ընելու, եթէ կանչուիմ։  
Վերջացնելով, այս չափով, իմ անձնական բաժինս, կը մաղթեմ ժողովին կատարեալ յաջողութիւն։

1949 Դեկտ. 4

Հովիւ Իւնիքն Սիտիի Սոխաչ Եկեղեցւոյ

Խորէն Քհնյա Մամիկոնեան

Կայք թիւ Անդրեյան